Առափի

Առափի բնակավայրի վարչական տարածքը կազմում 1516.6 հա, բնակչությունը 1697 մարդ։ Գտնվում է Ախուրյան գետի աջ ափին, ծովի մակարդակից 1500 մ բարձրության վրա։ Մարզկենտրոն Գյումրիից հեռավորությունը մոտ 2 կմ արևմուտք։ Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով։ Ամառը տաք է, համեմատաբար խոնավ։ Գյուղատնտեսական հողատտարածքները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր։ Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է։ Զբաղվում են պտղաբուծությամբ, հացահատիկային, բանջարաբոստանային, կերային կուլտուրաների, կարտոֆիլի մշակությամբ։ Բնակավայրում գործում է հանրակրթական դպրոց։